

# ЗНОДІЙ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## ԴՎԵ ՄԵԴԱԿՈՐԸ

Ապրիլ, 1895 թ.

Խնչպէս հաղորդում են եւրոպական թերթերը, Սասունի կոտորածի Քննիչ-Յանձնախմբի անդամների մէջ մի վելին աստիճանի տարօրինակ հարց է բարձրացել՝ թէ ում զօյ է ընկնում կոտորածի յանցանքը...

Քաղաքակրթւած աշխարհը մի ժամանակ կասկածան-  
քով էր վերաբերում կոտորածին. նա չէր հաւատում,  
թէ մարդ կոչւած էակը ընդունակ է այդպիսի գազա-  
նային գործողութիւնների, որ այդ տեղեկութիւնները,  
նկարագրութիւնները շինծու, առասպելական են, որ  
դա չարանենք, խոռվարալ մարդկանց հնարածներն են  
միջազգային խաղաղութիւնը վօդովելու համար:

Կոտորածը կասկածանքի էր ենթարկում և դիպօ-  
մատեան, որը աւելի ճիշտ և մանրամասն աեղեկու-  
թիմներ ուներ եղբութեան մասին, քանի որ նա բա-  
ցի գեսպաններից ու հիւպատոսներից, ունի ամեն՝ տեղ-  
իւր ագենտները, որոնք անմիջապէս ամենամանրամասն  
տեղեկութիւն են տալիս իրենց կառավարութեան տե-  
ղի ունեցած թէ խոշոր և թէ մանր դէպքերի մասին.  
այդ ամբողջ աշխարհը գիտէ: Բայց ներկայ պարագա-  
ներում դիպլօմատիային երբէք ձեռնտու չէ այդպի-  
սի մի խնդիր ասպարէզ հանել, սուլթանի կառավարու-  
թեան վրայ ձնում գործ դնել ու միջազգային քաղա-  
քական բնաւորութիւն տալ, որովհետև նա կարող է  
դժւարութիւններ առաջ բերել և գուցէ մինչև իսկ  
ընդհարման տեղիք տալ քանի որ իւրաքանչիւր պե-  
տութիւն տարբեր, մէկ-մէկու հակառակ շահեր ունին  
Հակական խնդրում:

Երբ սարսափը ամբողջովին երևան հանւեց շնորհիւ  
հայ յեղափոխական թերթերի, որին արձագանգ տւեց  
Եւլուպպայի ու Ամերիկայի անկաշառ մամուլը, և կասկա-  
ծանքով վերաբերուղ հասարակութիւնը յուզեց, վըր-  
դուկւեց, գիպլօմատեան անկարող եղաւ այլևս շարունա-  
կել իր բոնած գիրքը, խուլ մնալ և, հասարակական  
կարծիքի Ճնշման տակ, ակամացիցս ստիպւած եղաւ զբազ-

ւել այդ խնդրով՝ մանաւագ. Անգլիական դիվլօմատեան, և իբրև միջոց յուղւած հասարակութեանը խաղաղացը-նելու, նա մի Քննիչ-Յանձնախումբ նշանակեց գործը ու քննելու և ուսկութիւնը երևան՝ հանելու . . .

Արդէն այս երեսյթը ինքն ըստ ինքեան աչքի ընկ-  
նող մի փաստ է, որ դիպլօմատեայի կողմից սա մի խաղ-  
է, որովհէետև անհնարին է, որ Քննիչ-Յանձնախումբը  
նշանակող դիպլօմատեան տեղեկութիւն չունենար կուռ-  
րածի իսկութեան մասին։ Միայն մի բան կարելի է են-  
թագրել - որ դիպլօմատեան կասկածանքով է վերաբեր-  
ւում իր ներկայացուցիչներին, որ վերջիններն ես ոյե-  
ղափոխականներ՝ են և ուզում են եւրոպական խաղա-  
ղութիւնը վրայովել ուստի և հնար ովկի տեղեկութիւն-  
ներ են տալիս իրենց պետութիւններին։ Իսկ ենթագրել  
այսպիսի մի բան, աւելի քան խելագարութիւն կը լինի։  
Քայլ դիպլօմատեային հարկաւոր է այդ խաղը՝ խնդիրը  
ձգձգելու նպատակով, որպէսզի գուցէ այդ ժամանակա-  
միջոցում կոտրածի տպաւորութիւնը թուլանայ, յուզ-  
ւած հասարակական կարծիքը հանգատանայ ու իրեն յա-  
ջողւե գործին այն ընթացքն ու ելքը տալ ինչպէս ի-  
րեն հաճելի է, ինչպէս պահանջում են միջազգային քա-  
ղաքական շահերը։ Իսկ եթէ այդ չի յաջողւիլ գոնէ  
նա հնարաւորութիւն ունենայ սարսափը մի կերպ նաե-  
մացնել և խնդիրին այնպիսի բնաւորութիւն տալ, որ  
պետութիւնների մէջ մեծ դժւարութիւն չծագի, միշտ  
իրենց լարւած յարաբերութիւնը աւելի ևս չլարւի և  
ընդհարման տեղիք չտայ, որից սարսափում է մինչեւ ա-  
կանցները գինւած իւրաքանչեր պետութիւն։

Դիպլոմատիայի առաջի յշսը, որ մի հոգեբանական խաղ էր քաղաքական գոյնով, չարդարացաւ։ Քաղաքական թւած աշխարհի յուզւած հասարակական կարծիքը ոչ միայն ջևաղաղեց, այլ ընդհակառակը, չնորհիւ այն հանդամանքի, որ նոյն իսկ իր զաւակներն են մտնում այդ թշւառ երկիրը, տեղն ու տեղը տեսնում, ստուգում և ի լուր աշխարհի յայտնում կատարած գաղանային սարսափը, նա աւելի լայն ծաւալ առաւ և պետութիւնների դիմումները քրօնիքական բնաւորու-

Թիւն ստացան: Սրանից յետոյ դիպլօմատիային մնում է երկրորդ միջոցը — սարսափը նսեմացնել և ուրիշ գոյն տալ. և աչա ծագում է նշանաւոր հարցը — կոտորածի յանցանքը ում վրայ է ընկնում: Եւ այս հարցը տախ է այն դիպլօմատիան, որին բացի հայ յեղափոխականից և հայ ժողովրդից, աւելի ճիշտ կերպով յայտնի է կոտորածը իւր ամենայն մանրամասնութեամբ: Այս հարցով կոտորածը կառաքածների ենթարկող դիպլօմատեան, ակամայից խոստովանում է պաշտօնապէս իւր ներկայացուցիչների բերանով, որ կոտորածը տեղի է ունեցել, չնայած որ իւր քննիչ Յանձնախումը դեռ չի վերջացրել իւր խուզարկութիւնները և մինչև իսկ շատ դանդաղ քայլերով է առաջ գնում: բայց, ինչպէս ասցինք, նրան հարկաւոր է կոտորածին ուրիշ դոյն տալ և այդ կարելի է միայն իսկական յանցաւորի տեղ ուրիշը դնել, մեղադրանքը անմեղի վզն բարձել — ճիշտ սուլթանական դատավարութիւն: Այլապէս փոքր ի շատէ նիդճ ունեցող անհատը, որ մինչև իսկ միայն մի թիթէ գաղափար ունի սուլթանի կառավարութեան և սրա ու հայ ժողովրդի յարաբերութեան մասին, հաւատացած ենք, երբէք այսպիսի տարօրինակ ու պյանդակ հարց չի տալ իրան և մի վայրկեան անդամ կանդ չի առնիլ դրա առջև, նա այնքան պարզ ճիշտ և հաստատ է:

Ասում ենք հարցը տարօրինակ ու պյանդակ է, որ դա սուլթանական դատավարութիւն, քննութիւն է, որովհետեւ դիպլօմատեան, երկրների կառավարիչներն աւելի լաւ գիտեն քան մի ուրիշը, որ մի որեւէ երկրում չի կարող ունի ունենալ այդպիսի քրօնիքական, յարաւե կեղեցում, թալան, բոնաբարութիւնը, կոտորած, եթէ ինքը կառավարութիւնը չի խրախուսում, չի հովանակցում, չի մասնակցում: Սրանք շատ-շատ լաւ գիտեն, որ ներկայումն կառավարութիւնները ամեն տեղ աւելի ուժեղ են, քան օպարօղեան, որ եթէ կառավարութիւնները ուզենան, բարեհածեն, կարող են արեան գետերի մէջ խնդրել իրանց հակառակորդներին, թէւ դրանով նրանք իրանց կը տան ամենածանր մահացու վեցը. նա շատ լաւ գիտէ նոյնպէս, որ նոյն է և Տաճկաստանում: Սուլթանի կառավարութիւնը, չնայած իւր ներկայ անկանոն կազմակերպութեան, չնայած նրա թուլութեան, եթէ ուղենայ՝ կարող է, չենք ասում անպայման կերպով, գոնէ մի որոշ չափով արգելել քրդերի զանազան միւտիրների, զապթեանների աւազակութիւնները և զսպով մօլաններին ու ազնւականներին, որոնք դրգում են ամբոխը յարձակում գործել ոչ-կրօնակից ժողովրդի վրայ և կոտորած անել:

Անը խօսքն ընդհանուր առմամբ է, բայց եթէ խօսք-

ներս, մասնաւորելու լինինք Սասունի վերաբերմամբ, մենք կը տեսնենք այդ տեղ ոչ քիւրդի աւարառութիւնը կայ և ոչ էլ մոլեւանդ ամրութիւնի յարձակումը այլ որ կոտորածը արել է զօրքը Զաքի. և Թահսի փաշաների ղեկավարութեամբ. այս փաստ է: Նոյն է ասում դիպլօմատեան և իւր քննիչ-Յանձնախումը, խոստովանում է և այժմ ինքը սուլթանի կառավարութիւնը, որ մի ժամանակ ուղանում էր և իւր եւրոպական ներկայացուցիչների ու կաշառած թերթերի միջոցով հերքու հերքում յետելից եր թիսում թէ այդպիսի բան չի եղել, դա միայն խոսվարար հայերի շինծու լուրերն են: Իսկ այժմ մի կողմից աշխատում է յանցանքը գցել քերտերի վրայ, իրու յանցաւորների, նրանց պատժում է, ընտանիքով գաղթեցնում հեռու երկիր (որով մաժամանակ հեռացյան է լինում և վկաներին), նրանց գեղեցերը այրում, աւերակ է դարձնում, իսկ միւս կողմից, մի և նոյն ժամանակ, նա ասում է որ զօրքը ուղարկել և Սասուն կարգը վերականգնեցնելու ու զսպելու հայ ապստամբեաններին. իսկ եթէ կոտորած, և եղել յանցանքը իրենը չէ, այլ... մի խօսքով սուլթանի կառավարութիւնը ամեն միջոց գործ է գնում իւր արիւնու ձեռները մաքրել... Եւ այս անմիտ ու անսմօթ փաստաբանութիւնը հաճելի է թւում դիպլօմատեային, որովհետեւ ձեռնուու է և ահա նա ել սկստրում և ունյայաց յանցաւորին... .

Այս փաստ է, որ կոտորածը արել է զօրքը Զաքի և Թահսի փաշաների ղեկավարութեամբ: Ներկայ զինուորական կազմակերպութիւնը յայտնի է ամբողջ աշխարհին. յայտնի է որ ոչ մի զինուոր չի յանդգնիլ հրացան արձակել եթէ նրան չի հրամայում, նա չի համարձակիլ չարձակել, երբ նրան հրամայում են, եթէ մինչև իսկ դիմացը կանգնած է իւր եղայրը, քոյրը, հայրը, մայրը... այս շատ-շատ լաւ գիտէ դիպլօմատեան... Ոչ մի հրամանատար այդպիսի հրաման չի արձակիլ, եթէ նրան պատկրած, հրահանդ և իրաւունք չէ տւած: Զինուորը մի գործելը է, որ դնում է գործադրութեան մէջ հրամանատարի միջոցով, իսկ վերջնիս գործադրութեան մէջ դնողը բարձրն է, որի ձեռքին է ամրող երկրի ղեկը և ճակատագիրը, որից կախւած է միլիոնաւոր մարդկանց կենաքը. չարիքի գլխաւոր աղբերը սա է իսկ միւսները երկրորդական և միջնորդական դեր են կատարում: Տարբերութիւնը երկրորդական զերի ամբոխը կառավարութիւնների վերաբերման լինում է միայն գործադրութեան աստիճանի և չափի մէջ: Դարձեալ ով է մեղաւորը... .

Ով է մեղաւորը. — նա, որ դարերով կեղեցում, հաւատում, բանաբարում է. նա, որ Սուշում, Եւգոկեայում և ուրիշ տեղեր կոտորած արեց, որ բանաերը լցու-

բել է հազարաւոր հայերով և սրանց ենթարկել ան-  
լուր տանջանքների. նա, որ կախաղաններով է զւարձա-  
նում... .

Ո՞վ է մեղաւորը.—նա, որ գրգռում է տաճիկ ժողո-  
վոդին հայերի դէմ, որ մօլանների, ազնւականների, գո-  
ղերի ու աւազակների բարեկամն ու խրախուսողն է, որ  
նազիմ-Թահսի-Զաքի-Քահրի արիւնլուսւշտ, լէշակել պաշտօնեաներ ունի... .

Ո՞վ է մեղաւորը.—մեղաւորը նա է, որ հրամայում է  
մորթոտել երեխաններին, յլի կանանց արգանդները  
պատուտել, կանանց ու տղամարդկանց խարոյիի վրայ  
բարձրացնել, կենդանին-կենդանի թաղել, կաշին ծաշկել,  
մարմի զանազան անդամները կտրտել. նա, որ Սասու-  
նը աւերակ է գարձրել, նրա զաւակները կոտորել, ցիր  
ու ցան արել. նա, որ հենց այժմն, Քնիշ-Յանձնա-  
խմբի աչքի առջե, ամբողջ երկիրը զինւորական շըն-  
թաներով է կապել, տէրրօրի մատնել՝ ծածկելու, անհե-  
տացնելու իւր ոճրագործութիւնը. վերջապէս մեղաւորը  
նա է, որ Հայաստանը ոմարդկային սպանդանոց է գարձրել... .

Եւ այդ մեղաւորը սուլթանի, կառա-  
վարութիւնն է:

Այս բոլորից յետոյ չպէտք է տարօրինսակ ու այլան-  
դակ ընդունել այդպիսի մի հարց և համարնել դիպլո-  
մատիայի կողմից մի բաւականին անտաշ, կոշտ խաղ.  
մի խաղ, որ զերաբերում է ամբողջ մի ժողովրդի, մի  
երկրի ճակատագրին: Այդ խաղն էժան չի նստիլ դիպ-  
լոմատիային: Հայ ժողովուրդը ցոյց կը տայ, որ իր ճա-  
կատագրին իրենից է կախւած: Դիպ օմատեան թող փընտ-  
րի յանցաւորը. մինչեւ նրա գտնիլը, հայ ժողովուրդն  
իր արիւնով կը ներկէ իւր հայրենիքն ընդհանուր ա-  
պստամբութիւն անելով. և այն ժամանակ մեղաւորը կը  
գտնի: Բայց արդէն ուշ կը լինի... . Հրդէն արդէն  
բանիւած և շատ բան այրած կը լինի... .

Այն ժամանակ ով կը դառնայ մեղաւորը... .

## Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց

Իրերի ներկայ դրութեան մէջ տաճկահայ ժողովրդի  
վիճակը չափագանց կրիտիքական է: սուլթանի կառավա-  
րութիւնը որի աւանդական քաղաքականութիւնն է  
ծածկել լոյս աշխարհից ամեն բան, հակառակ իւր օղ-  
հասական զանքերին, չկարողացաւ վերջապէս նւրուպայի  
առջն չքարձրացնել այն վարադոյը՝ որի ետևը, բեմի  
վրայ կատարեցան այնքան արիւնալի դրամաներ:

Նւրուպական Քնիշ Յանձնաժողովը վաղուց հասել է  
մուշ և առաջ է տաշտում իւր խուզարիկութիւնները.

անկասկած քննութիւնը նրան այն հետևանքին կը հա-  
ցընի, որ Տաճկահայաւանում կատարւած գազանու-  
թիւնների վերաբերմամբ արտասահմանեան մամուլի մէջ  
արձանագրւած փաստերը դեռ ևս շատ աննշան, հայիւ-  
տամներորդ մասն են կազմում տեղի ունեցած քստենե-  
լի իրողութիւնների: Թիւլքաց գորներում այս օտար  
միջամտութիւնը առիթ է տւել բնականաբար մահմե-  
դական ազգաքնակութեան զանազան մտածողութիւննե-  
րի: ինչ որ էլ լինին դոքա այնուամենայնիւ պարզ է, որ եթէ այս անգամ էլ Հայկական Հարցի վերա-  
բերմամբ Խւրոպական դիպլոմատեան դրական և վճռա-  
կան հետևանքների չհամի, թէ սուլթանի կառավարու-  
թիւնը և թէ կոյր թիւլք ժողովուրդն այ ևս ար-  
խէ յին ացած, պատրաստ պիտի լինին իրենց վրէժանընդ-  
րութեան բոլոր սարսափը թափել այն խնդի հայերի  
գլխին, որպէս այսպէս ասած, անընդունակ գտնւեցան  
մի անգամ էլ խեղուել իրենց ձայնը, լուն սարսափն-  
լի հարւածների տակ և գոյս լինել ողորման սէր սուլ-  
թանից, որ բարեհաճնեց բարբարոսաբար մի ամբողջ  
աշխարհն: մի քանի տասնեակ հայար ժողովուրդը պատ-  
ժել, ոչխարի պէս կոտորել, ուղիղ ճանապարհի վրայ  
կանգնեցնելու համար: Ինչ ասել կուզի որ առ ան-  
ձին միջոցներ ձեռք առնեած են արգելելու լու-  
հայերին, որ սոքա ոչ մի բողոք չկարողա-  
նան ներկայացնել Քնիշ Յանձնիչ Յանձնա ժողովին:  
Շայած մեծ զգուշութեան երեք սասունցիններից երեսու-  
ար խոյս ատլով, հագն ագատւեցան, իսկ մէկը ձերբա-  
կալեց միմիայն նրա համար, որ համարձակել էր Քնի-  
շ Յանձնաժողովին մի յիշտակագիր ներկայացնել  
Սասունի վերջին խժժութիւնների մասին: Գլուխը կոր-  
ցրած կառավարութիւնը աշխատում է, ահագին փող  
է ծախսում, շնորհակալութեան գրեն չեռոք անցնելու  
համար, իսկ ամեար բարեբախաբար ամեն աեղ այ-  
գելքների է պատահում ժողովուրդը կարծես թէ հա-  
կանում է այս պատմական բոպէի ահագին նշանակու-  
թիւնը և կամնում է ոչ մի կերպ մեղադրանը չհրա-  
ւիրել իւր վրայ ապագայի առջե: Բաղէշում մի քանի  
իշխաններ նախամեծար են համարել փետել բանտեցում,  
քան կատարել վայրենի կուսակալի կամքը-ստորագրել  
շնորհակալութեան թուղթը: Անդապէս ինչպիսի հրէշ  
կարող է համարել այն հայը, որը հանդիսաւ խղճով  
թոյլ տայ իրան յեղացնել փաստերը, մինչեւու գլուխ  
նոյն իսկ թիւլքաց բերանում այնքան պերճախօս են:  
Աւելի մի կամ երկու նախօթ այստեղի նշանակու-  
թիւնը որը ուղարկեց Սասունի վրայ, տաքացրէը նոր-  
րանց պօղազը և տեսաէք թէ ինչեր են պատմում, ինչ  
փայլուն գոյներով նկարագրում իրանց սխրագրօթու-  
թիւնները: Քաղցած զինուորներ այժմ վողի տէր են դա-  
ռել. Համը բերաները մացել է, և հենց այդ պատ-  
ճառով այստեղ օր ցերեկով մարդիկ են կողոպտում:  
Դէքէ-Պօղինից՝ որտեղ գտնւած են Տաճկահայ ամրու-  
թիւնները, անդատանդ անցնել անհնարին է, զուցչը ը-  
շըակայ ամրացներից ցած են իշխում և պատահան-  
ձանքորդին հային անշուշտ կատարելապէս մերկացնե-  
լուց յետոյ բաց թուղթում: շատենք առաջ քայլութ

են արժանանում, նորքա ունեցածից շոկ շատ անդամ կեանքերն էլ են տուժում. գեռ անցեալ օր թիւղը զինւրդներն այնպէս սարսափելի ծեծ էին տւել մի հայի, որը հետեւեալ օրն իսկ՝ ծանր տանջանքներից մեռաւ: Դոքա չեն, բաւականանում քաղաքից դուրս արած շահատակութիւններով. մի շաբաթ առաջ քաղաքիս Գէնէրծի կոչած փողոցում բռնել էին առաւտօռ վաղ եկեղեցի գնացող լուսարարին, մի լաւ ծեծել, ամեն ինչ վրայից առել, նոյն իսկ եկեղեցու բանալին:

Ցուրքերը հաւաքում են ամենայն խստութեամբ, առաւր հացի կարօտ հայ արհեստաւորը, հայ գիւղաքին ստիպւած և զրկել իւր ամենահենաւական անհրաժեշտ պէտքնրից կառագարութեան ծակ գանձարանը լեցնելու համար: Հարկահաւաքներն էլ շւտրել են, պատւէր են ստացել պարտքը չվճարողին բանտարկել տալ, իսկ այդպիսիների թիւը հայերի մէջ առնւազն 1000-1500 հոգի է: բանասային շենք էլ հարկաւոր է, թէ՞ ոչ:

Առանձնապէս անտանելի է դառնել և հայ առեւտրականների դրութիւնը. կանխիկ առեւտուր Աստւած տայր Կեաւուրուն մալի հալալ տըր ասում են թուրքերը և փառաւորապէս կուլ տաքս իրանց պարաքը. Տէօվլէթէ խային էրմէնիէր բառերը պյժմ աւելի յաճախ լսւում են թիւրքերի բերանից, պաշտօնական անձննը մինչեւ անդամ հակառակ թիւրքական փօլտիկային, չեն կարողանում ծածկել իրանց տաելութիւնը դէպի հայերը և արտայայտում են նոյն իսկ դատարանական սըրահներում: Անցեալ օր Մահքէմէի Ըէրիի բաշքեթիպը (առաջին քարտուղարը) ինչ որ գործի պատաժուք ամբաստանեալ երեք հայերի ցցց տալով՝ դառնում է դէպի ամբաստանող թիւրքը և մի քանի ունկնդիրների ներկայութեամբ ասում՝ դատարանի մէջ. ունկն բու փոխլարա թարափ մի չէքիեօրում, օնչար էրմէնի, պիզ էլչամտուլլահ իսլամ վէ տին զարտաշի՝ (Ես այս քու կողմը բռնում եմ միթէ. նորքա հայ, իսկ մենք, փառք Աստուծոյ, իսլամ և կրօնակից եղայրներ): Այս խօսքերը ասում է արդարութեան պաշտօնեան, դատարանի մէջ... Մնացածը կարող էր ինքներդ երեւակայել:

Այս շաբաթ կատարւած խուզարկութիւնից երևաց, որ սասունցի ութը առեւանդամ աղջիկներ իսլամացնելու համար պահում են այսանեղ ինչ որ մօլլաների տանը. Թշւառ սասունցին զրկեց իւր կեանքից էլ, գոյքից էլ, պատուից էլ... ծոորվուրդը խորը յուղւած է, նա իւր աչքերով տեսնում է ամեն ինչ և սպասում է. նորա համար լինել կամ չլինելու ժամը մօտնցել է:

Ծոորվուրդի չքաւորութիւնը Եայրայեղութեան է հասնում. հարիւրաւոր ընտանիքներ մնացել են մի կատոր չոր հացի կարօտ. հենց այսօր մուսնետիկը աճուրդով ծախում էր 45 հայի տուն: Քաղցած մարդու աչքն տուն կերևայր:

Այս բոպէիս ստացւեց հետեւեալ տեղեկութիւնը — քաղաքից մի ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Խօգուդչերմուկ գիւղից Պօտոս քեհի տանից մի երիտասարդ գիւղ վերադառնալիս պատահում է մի քանի թուրք սրբիկաներու, որոնք առաջ բռնոր վալիներուն, միթէսարիֆներուն, գայմագամներուն և միւրիներուն ի գործադրութիւն:

Նախիս են եղել մնահամէդի դրախտում զւարձանալու յարձակում են դոքա հայ երիտասարդի վրայ և սարսափելի կերպով ծեծում են. խեղճը բոլորովին ջարդաւած, հափու հասնում է գիւղ և մեռնում Յ ժամից յետու:

Քննիչ Յանձնագողովի եւրոպական պատիրակները եւ ունդով գործում են: Չնայելով այն սարսափելի տէր րօրին, որ կառավարութիւնը տարածել է հայ ժողովդի մէջ, չնայելով նոյն իսկ բաղմաթիւ և ամեն կողմ վխտացող թիւղը և հայ լրտեսներին, հայերը դարձեալ յաջողել են տեղեկագիր ներկայացնել Քննիչ Յանձնագողովին: Սուլթանի կառավարութեան գործ դրած ջանքերը ապացուցանելու, թէ կոտորածի պատճառն իրանք հայերն են եղել, միանգամայն ապարդիւն են անցել:

## ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻ 8

Բարձրագոյն գաղտնի հրամանը Սուլթանի խելացնոր բռնապետութիւնը սարսափահար Սամսնյ կոտորածի աշխարհադղորդ ձայնէն, գտած ընդհանուր համակրութիւնէն և շւարած ազատամիտ, մարդասէր, անկաշառ եւրոպական ու ամերիկական մամլոյ, հասարակութիւններու յարուցած բարձրագաման, ցասկոտ բողոքներէն, ընդհանուր ցոյցերէն, վարկեան մը փորձեց իր պարարիւնութիւնը գտնել և վերահաս վտանգէն իր քայլայւած գահը փրկել և հայկական շարժումները դադրեցնելու խեղեկել արմատական միջոցներով: Զար սուլթանի շողոքորթ, աւազակ, հլու ծառաները նախական սըրահներու խորհուրդի կը հրաւիրան: Խորհուրդի կուրդի կը հայտելի վերջապէս թիւղը դիպլոմատները խելքերնունուն զու կուտան և կը վճռեն հայ յեղափոխական շարժումները արգելելու, խեղեկելու համար հետեւալ արմատական միջոցները անմիջապէս է գործ գընեն 1) զօրացնել թէ ի Պօլիս և թէ բոլոր քաղաքներու և գիւղերու հայաբնակ թաղերու մէջ ցորեկեայ և գիշերային ամենախիստ հակողութիւններով: Այս ցորեկեայ և գիշերային հակողութիւններով թուրք պաշտիպուկ բռնապետութիւնը կը յուսայ, թէ ոչ միայն պիտի արգելէ յեղափոխական գումարումները, խորհրդակցութիւնները, տեսակցութիւնները ու շարժումները, ոչ միայն պիտի ջալատէ, չեղոքացնէ մնացորդ աղատ, տկար յեղափոխականները, ոչ միայն այդ ճարպիկ, արմանք զարմանք շարժողը, վերին աստիճանի նուրբ սրամիտ թուրք գիւղ լօմատներու խեղապատակի ծնունդ, գանդերուն շուրջ պատիւ բերող դրական միջոցով պիտի արգելք ըլլան հայ յեղափոխականներուն նորէն զօրանալու, նոր շարժումներ առաջ բերելու, այլև պիտի վերջապէս յաջողին եղած սակաւաթիւ, տկարացած (իրենց հարծիքով) քօմիտէններու ու քօմիտաճները ձերբակալել վեհափառ սուլթանի շնորհիւ և վերջապէս օձը իր բնի մէջ խեղեկել: Այս բարձրագոյն գաղտնի հրամանը հաղորդւեցաւ այսի 2 ամիս առաջ բռնոր վալիներուն, միթէսարիֆներուն, գայմագամներուն և միւրիներուն ի գործադրութիւն:

որ միշեալ գաղտնի հրամանը ամեն ուրեք գործադրել սկսած են ամենայն ձշութեամբ և ցորեկեայ ու գիշերային խիստ հսկողութեան ենթարկւած են հայերը: Բայց չնայելով այս խիստ հսկողութիւններուն, տակաւին ոչ մի քօմիտէ, ոչ մի քօմիտաձի ոչ միայն չճերբակալեցաւ, ոչ միայն շարժումները շարգելեցան, այլ և աւելի մեծ չափեր առաւ յեղափոխական պրօպագանդան, յեղափոխական ընդդիմագրական յժմը, իսկ յեղափոխական կազմակերպութիւնները որ աւուր զօրանալու, աւելի ամրապնդելու վրայ են: Շատ չանցած, սուլթանի բռնապետութիւնը պյու սյմի նոր ապացոյները պիտի տեսնէ և պիտի համոզի, որ այսուհետեւ բռնապետութեանը կը մնայ խոնարհւիլ մեր առջե...

Սուլթանի մեծանուն գիտլումատներու երկրորդ և ամենազօրաւոր զէնքը ի սկզբանէ անտի եղեր է և է կաշառքը, օսմաններն լիրաները: Գրան սուլթանը արտօներ է եպարքուին և նախարարական խորհրդին ոչինչ չինայել կաշառելու Պօլսի երոպական դեսպաններուն, դեսպանական կցորդներուն, ազգեցիկ երոպացիներուն և երոպական նշանաւոր լրագիրներու խմբագիրներուն ու թղթակիցներուն: Սուլթան Համբը մինչև իսկ իր սեպհական գանձէն 300,000 ոսկի տարելէ այդ նպատակաւ: Այդ խորհրդի մէջ որոշեր է թէ Պօլսի և թէ Երոպական յատուկ թերթեր հիմել և յատուկ թղթակիցներ վարձել: Այս հրամանը ևս սկսած են ամենայն ձշութեամբ ի գործ գնել և այդ որոշումէն տակաւին Զ-Յ ամիս չանցած, կըսւի թէ գանձարանը ոսկի չէ մնացեր, այնպէս որ սուլթանը հարգագրւեր է գարձեալ 100,000 ոսկի տալ սեպհական գանձարանէն:

Սուլթանի կառավարութեան բոլոր գործ դրած միջները կաշառել Պօլսի երոպական դեսպանները, բացառութեամբ ամերիկեան դեսպանի, ապարդիւն անցան: Կառավարութեան յաջողւեց 500 ոսկիով կաշառել ազգուրաց, դաւաճան Հայ-կաթոլիկներու պատրիարք Ազգաբեանին և Ազգաբեանի ձեռքով Ամերիկեան դեսպան Թըրըլին 25,000 ոսկով: Փորձած են, կըսւի, կաշառել և Քնիչ Յանձնաժողովի երոպական ներկայացուցիչներուն և թարգմանին, բայց, կըսւի, չեն յաջողած, միայն վերջերս հաստատեցաւ, որ թարգմանը կաշառւած է եղեր, ուստի և փոխեցաւ: Պօլսի դեսպանական պահանջի հիման վրայ նոր թարգման նշանակւեցաւ Կարնոյ Փրանսիական հիւպատոսարանի թարգմանը, որը Հայ-կաթոլիկ է և Հայատեաց: Շատ ցաւալի է, որ Պօլսի դեսպանները չկրցին Ք. Դուան ընդունել տալ թարգմանի պաշտօնի համար աւելի վստահելի, ազնիւ, անկաշառ անձ մը: Յիշեալ թարգմանը արդէն յայտնի է իւր թիւրքամոլութեամբ և արդէն շատունց, տակաւին այդ պաշտօնին չկոչւած, կաշառւած է եղեր: Մենք արդէն ոչինչ նշանակութիւն, բնաւ կարեռութիւն չենք տար քնիչ յանձնաժողովին և մենք ոչ միայն ոչինչ չենք սպասեր այդ ժողովն, այլ և կը ցաւինք, որ շահամէր, եսամոլ Եւրոպան այդպիսի ձեւական միջոցներով կուզէ խաբել, մոլորեցունել Հայ ժողովուրդը, յունադրել միամիտ Հայերն և իրենց միամիտ առաջնորդներն ու զուր ձգձել Հայկական խնդրի լուծումը: Քնիչ յանձնաժո-

ղովը պարզ նախատինք մըն է երոպական քրիստոնեայ պետութիւններու համար և ապացոյց անոնց անգրիստոնեայ, անմարդասէր ու շահախնդրական ընթացքին: Այս կարծիքի են նշն խիկ երոպական ազնիւ, անկաշառ լրագրներն ու երոպական հասարակութիւնները: Մենք միայն կամեցանք արձանագրել յիշեալ դէպիքը և զդուցացնել թէ Հայոց ազգը և թէ անոր վարիչ պարագը լունեներն ու պաշտօնական անձերը կամ ժողովները: Հայ ժողովուրդը թող իր յայսը գնէ միմիայն իր վրայ, մահ զգեցած Հայ յեղափոխականներու, արիւնու յեղափոխութեան վրայ և անոնց աջակցէ, անոնց օգնէ, անոնց պաշտպանէ, որոնք պիտի հարկադրեն թուրք բըռնապետութեանը ոչ միայն խոնարհւիլ Հայ ժողովը դիմումի արարացի պահանջներու առջե, այլ և պիտի ստիպեն շահամոլ երոպական պետութիւններուն վերջ տալ իրենց անքրիստոնէական, անմարդասէր ընթացքին և Հայկական խնդրին լուծմանը իրենց օժանդակութիւնը շնորհչել: Եւրոպական ազտամիտ, անկաշառ մամուկը և մարդասէր հասարակութիւնները մեզի հետ են, որով մենք քաջակերուած, կը շարունակենք մեր կուրւը... մի քանի հարւած ևս և սուլթանական գահը կը փշուի, կը խորտակւի և մենք կըստանանք մեր ցանկալի պատութիւնը...

Հարեմի գարշելի կեանքի մէջ մնած, հարեմի գարշահութիւնով մեծցած, հարեմի վավաշու միժնոլորդի մէջ աճած անբարյական սուլթան Համիլը մինչեւ իսկ իր սուլթանուհիները, իր հարեմի գեղսւիհիները, իր կիները աճուրդի հանած է հրապուրելու համար Պօլսի երոպական դեսպանները և անւանի, ազգեցիկ եւրոպացիները: Թշրուականն իր թշշառ գոյութիւնը, իր քայրայւած բռնապետութիւնը պահպաննելու, հայկական քայրայւած գանձարանը խամար, երբ տեսաւ իր աղաւանքները, իր գիւնագիտութիւն-խորամանկութիւնը իրեն չօգնեց, պարպեց իր գանձարանը, երբ այս ալ չօգնեց, իր կիներու վրայ դրաւ իր վերջին յոյսը... .

Թիւրք յեղագուստական շարժումը որբան ալ թուրք ու ակզենտութեան մէջ, այսուամենայնիւ իր գոյութիւնը այսօր վաստէ, իրութիւն է:

Թիւրք յեղափոխականները վերջերս Պօլսի քանի մը թաղերը սուլթանի կառավարութեան դէմ յայտարարութիւններ տարածեցին մեծ յաջողութեամբ: Առաւօտ մը թիւրք յեղափոխականները քանի մը ծրար յայտարարութիւններ, իրեր անպէտք թուրթ, աժան գնով կը ծախսն հալւածներու, որոնք հալւայ ծախսած ատեն հալւան կը փաթաթմեն յիշեալ յայտարարութիւններու մէջ, կը տան: Նշան-թաղ սուլթանի հաւատարիմ շուներէն մէկը հալւան կլլելէն ետքը, կը կարդայ յայտարարութիւններ, անմիջապէս սատիկանութեանը կիմացունէ, որը կը ձերքակալէ յեղագուստական կարծիք պարսիկ հալւածին: Հարցաքննութիւնները տեղի կունենան պալատին մէջ, բայց արդիւնքը... ոչինչ: Պարսիկ տպէտ, անգրագէտ հալւածին կը պատմէ, որ լուս-ու-մութիւն, երբ իր սովորութեամբ սկսաւ հալւա պուալ և ծախսել, փողոցի մը մէջ մարդ մը 30 փարայով ծախսեց իրեն յիշեալ թուրքները որոնց ինչ ըլլալը չի գիտեր,

վասնզի կարդալ գրել չցիտեր: Պարսիկ քանի մը հալւաճիներ տակաւին բանտարկւած կը ման:

Յայտարարութեան մէջ կարծ և աղդու կերպով ցոյց է տրւած թուրիոյ Հոգեվարք դրութիւնը, անոր մօալուտ մահը, եթէ վերջնական դարման ձեռք չառնի անոր փրկութեան համար: Յայտարարութիւնը կը վերջանայ աղդու հրաւերով մը, որով թուրք յեղափոխականները կը հրաւիրւին միանալ և տապալել գազան Սուլթան Համբարք, որու թագաւորութիւնը թիւրիոյ լայնածաւալ կայսերութեան համար աղէսներու, արհաւիրներու, կեղեքումներու և թշւառութիւններու երկար շաբը մ'է եղեր...

## 2 Մ Հ Կ Ա Ծ Ա Գ

Հարստահարութիւն, Ճնշում և կեղեքում իր վերջին գագաթնակէտին է հասած մեր այս թշւառ գաւառակի մէջ: Ահա մի խիստ համառօտ պատկեր այդ անտանելի դրութեան:

Խիստ հարստահարութենէ ու թալաններէ երկիրը ամացած, աւերակ է գառած ոի շնորհս վեհ. սուլթանի:

Ամբողջ 6 տարի է, որ կը աիրէ մեր երկրին մէջ անընուր խժդութիւնք, սպանութիւնք և ձերբակալութիւնք, մարդ չմնաց, որ չճաշակէր այդ պտուղէն: Թուրքերը ու քուրսեր միացած են մեր դէմ, ի բաց առեալ բռնակալութեան բարբարոս ուժերը, որ երդւեր են գարնան խսպառ ոչնչացնել հայ տարրը, եթէ յաջողի...

Բանտերը լին են անմեղների ստւար խմբերով: Զքաւորութիւնը, նօթութիւնը ալ մեզ սովորական դարձեր են: Հատ գիւղերու մէջ երկրագործութիւնը դադրած է. ժանդուած է հայ գիւղացու գութանն ու մանդալը: Այս ամենու հետևանքը եղաւ անցեալ տարւայ թանկութիւնը. ալ բան չմնաց, որ ծախեն, ոչ ոչնար, ոչ կով և ոչ ալ որ և է պարէն: Քուրտին տանք, թէ թուրքին: Հարկահաւաքները ամեն օր գիւղէ գիւղ կը շրջին ամեն ծայրայեղութեանց դիմով, աչքերնուն ինչ որ հանդիպի ի վաճառ կը հանեն պարտերու դիզման և իրենց ծակ փորի յագեցման համար:

Գիւղաքաղաքէն Յամ հեռու Օձգեղ առուն գիւղը, շուրջ 30 հայ տներով, աւերակ է դարձեր. բնակիչները ամեն փախեր են: Պողոսի անուն շէնը նոյն բաղդին է արժանացած. Յ տարիէ իւղեր ոչ ոք կը բնակի. առատ ցորենի հայի ու բազմաթիւ տաւարի տէրերը այժմ ափ մի կորեկի ու կը վկի համար կը դողան: Կառավարութեան դրդմամբ նոյնպէս տաւարի բաժին են եղած Հաղթունք, Խաչտուն, Հազարի, Մումացի, Բազարան և այլ գիւղեր:

Երկտեմբերի կերջին էր, որ կոխեցին Պրիկսի գեղը, կողոպտեցին եկեղեցին և շատ տներ, վերաւորելով մի քանի մարդ:

Դերսիմի քրտերը շարունակ իրար գէմ կուելով՝ երկիրը աւերակ կը լնէին: Բարեկինամ սուլթանի կառավարութիւնը այս աշիրեթներուն մէջ հաշտարար կանգնե-

լով և զանոնք իրար հետ հաշտեցնելով՝ իր ձեռքը գործ կը հայերս անոնց մով փչացնելու համար:

Խօճաւ-Աւշաղի աշիրեթի երկու աւազակապետները իր ձեռքն առած է: Ասոնք են՝ Պէքո և Քշտիկ, որոնց համագեստ, զէնք և հարիւրապետի աստիճան տւած է որոնք խոստացած են իրենց թաղար գիւղին մէջ զորանոց մի շինել և զօքքափայի կէսը թուրքը, կէսը քուրտ Քէնեթարցի Տիապը, որ իր տան մէջ հիւր եղող հայ յեղափոխականները գիւղերը քնացած ատեննին կապելով՝ կառավարութեան յանձնած էր, պատւանշանով և պատիւներով մեծարւելէն ետքը արձակ համարձակ կը կործանէ և կը կասորէ հայերուն:

Երեք ամիս առաջ կառավարութիւնը գիւղ և քաղաք բոլոր տունները խուզարիկելով՝ աւարի տաւաւ, պահած զէնք գտնելու պատրւակաւ, ընդ այսմ ձերբակալեց 25-30 մարդ, որք տարւեցան Խօջաթի կենտրոնական բանալիքասարը գիւղացի առջև, իր թէ ասոնք յեղափոխականները գիւղերը քնացած ատեննին կապելով՝ կառավարութեան յանձնած էր, պատւանշանով և պատիւներով մեծարւելէն ետքը արձակ համարձակ կը կործանէ և կը կասորէ հայերուն:

Դեկտեմբերի մէջ բանտին կեանքին այլ և չգիւմանալով՝ մեռան երեց-Ագարակ գիւղէն համար Արթեն Գոլապեան, Պատւանէն՝ Ստեփան Աճէմեան և Դաւթեան անձերը: Թուրք բռնակալութիւն, ահա քեզ Յ զոհ և արինածարաւ գաղան... հայ յեղափոխականը ատով չի ընկճի...:

Ուշպակ սրուարձանի մէջ գիւղը մը խումբ մի թուրքեր ծափտեալ քիւրտի զգեստով, կը մանին թագւորեան Արթենին տունը, աւարի կուտան ամն ինչ յետոյ կը սպառնան տաք զով խաշել զինքը, եթէ իւր պահած ստակները իրենց չյանձնէ: Խեղճ մարդը խմոր թխելու համար կաթսայով ջուր կը տաքըները նոյն ժամին. այն չափ կը ծեծեն, մինչեւ որ կը յաջողին իրագործել նպատակնին: Ողորմելին մահւան տագնապի մէջ է:

Երբ կը գիմենք կառավարութեան, նա իր պաշտպանութիւնը զլանալէ յետոյ, յիշոցներով և վախցնելով կը վրնտէ. նուռա կը խօսիք, անհաւատները, կը սէ. եթէ քիչ մը երկարեն, ոի բանտ, կը պոռան: Մեր յանցանքը հայ ինելն է, ուրիշ ոչինչ:

## ԱՐՄԾԱՆԻ ԽԵՐՈՅՑՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(ՆԱՄԱԿ ԵՐՁԱԿԱՑԻՑ)

I

Խ Ն Դ Ր Ո Ւ Ն Ժ Ա Գ Ո Վ Ո Ւ Մ Ը: 1891 օգոստ. 25-ին Ակնաց-Լիճք գիւղացի Միւտիր Պետրոս Պոլտարեան, իրենց գիւղի պատւելի Խաչտառուրին հետ տասանորդի տրոց վայ վլաճելով, կը բանտարկէ Խաչտառուրը՝ ներեղ իւր յեղափոխական կառավարութեան պիտի յանձ-

Նեմ” ըսելով: Այս լուրը կիճք գիւղացիք Արխանեան մէտ, Գալուստի կը հաղորդեն, խնդրելով միջամտել Պետրոս Պուտաքեանի իւր չար նպատակէն ետ կենալ: Արխանեան Մեծ գիւղացի Խաչատով պատւելի Քերէմեան, Պետրոս Պուտաքեանի զիկերլով յանձնարարական մը կուտայ: Քերէմեան Խաչատուր պատւելի Պուտաքեանի ներկայանալով, կը ևնդրէ ի պատիւ յանձնարարչին ետ կենալ իր նպատակէն, որ և է համզումի չանսալով՝ անդրւելի կը մնայ, որով Արմտանցի պատւելին սպառնաւաց սկսելով՝ ոազգը քեզի պէս շատերը ջնջեց, քեզ ալ ջնջելուն վստահ եմ” ըսելով զէնք կը քաշչ: Պուտաքեան անմիջապէս պոռալով, տանը մէջ պահւած սստիկան զինորներուն կանչելով, շուտով ձերբակալել կուտայ Արմտանցի միջնորդ Խաչատուր պատւելին: Այս արարը կիճեցի պ. Աղեքսանդրը Մ. Գալուստին կիմացնէ, այս անգամ խնդրելով, որ մարդ զրկէ, որպէսզի Ակն փոխադրած միջոցնուն ոստիկան զօրաց ձեռքէն առնիւ: Նոյնպէս նամակ մալ Բինկայ գրելով, կը ծանուցանէ, թէ Արմտայ գրած է, մարդիկ պիտի գան, իրենք ալ թող պատրաստին, որպէսզի ձեռքբերնէն առնեն: Այս վերջի նամակը տանողը անզուշարար կը կորնցնէ: Դժբաղդաբար սյն կորսւած նամակը Պուտաքեանի մշակը գտնելով, կը տանի Պուտաքեանի կը տայ: Միւտիր Պուտաքեան նամակն ալ մարդիկն ալ կը զրկէ Ակնայ կառավարութեան: Ակնայ կառավարութիւնը նամակին բովանդակութիւնը և հետեւարար Արմտայի մէջ Գոմիթէի մը նշմարւիլը կը հեռագրէ ներքին գործոց նախարարութեան, որին Գուրուզայի գայմագամն հրահանգ կուգայ նոոզարիել երկու Արմտանները: Խուզարկել վերջ 50 ոսկի փոքր (Արմտան) գիւղից 25 ոսկի մեծ (Արմտան) գիւղից առնելով, 18-ի չափ մարդիկ բանտ կը տանի, խոստանալով, որ շուտով պիտի աղատէ Արդարեւ, չնորհիւ կաշառքին, քանի մը օր վերջ բոլորն ալ կարձակէ:

Վերոյ գրեալ արձակումն 3 օր վերջ Արմտանցի թուրքերէն էմբեր անուն մէկն գիշերանց տանկըն վը-քայ այրէիլը կնոջ ձնչուուքէն գիւղացիք կիմանան և կը լեցւին ոճրին վայրը, ջրով կը մարեն զայն և կը տեսնեն, որ մեռած է. գիշերը տեղոյն միւտիրը կառավարութեան լուր տանելով, կը դառնայ Քէշֆի: Կառավարութեան գիւղ եկած պահուն ոճրագործ՝ նախուրեան Սարդիս, զինեալ՝ խօս կուտայ. պաշտօնեալք փախչելը կը տասեսնեն ու հետամուտ չեն ըլլար ձերբակալել: Սպնեալին գրացիներէն իւր կասկածելի 12-ի չափ մարդիկ ձերբակալելով՝ կը փոխադրեն բանտ: Խնդիրը երիզա հեռագրելով, գիազնութեան համար բժիշկ մը կուզէն. բժիշկը գնալով, 7 օրւան մեռածը գերեզմանէն կը հանէ, կը զննէ և խեղդւած ու ապա քարիւղով այրւած ըլլալը րաբօր կընէ: Փախչող Սարդիսը ամեն օր Էօմէրի բարեկամները տեսնելով, կըսէ՝ նէօմէրը և կապարով զարկի սպանեցի, բժշկին աչքը կոյր էր, որ կապարը չգտաւ ու խեղդւած ըսաւ. սպանեցի, որպէսզի կնիկը առնեմ”, և արդարեւ, ամեն գիշեր կուգայ Էօմէրի կնոջ հետ կը տեսնեի եղեր: Կառավարութիւնը կը լըսէ և փոխանակ Սարդիսը բռնելու, ձնչումները խստու-

թիւններ ի գործ կը դնէ ժողովրդեան վըայ, որպէսզի կեղեքէ: Եւ արդարեւ 1-2 մարդ տանելով, կաշառ կառնեն ու կարձակէն: 12-ը իւր ոճրագործ միշտ բանտը կը պահէ... Ոճրէն 2 ամիս վերջ եղեռնագործ Սարդիս Զիմասա գիւղը ոճրէն լուսակալը իր ընկերէն կը զարնսի, կառավարութեան և գիւղացոց կողմէ պաշարւելով, կը բռնսի, կը տարբի գէպի Տիվրիկ, ուր կը մեռնի բանտին մէջ: Այս միջոցին Պոլսէն Արմտա կուգայ նախորդ միւտիր Մ. Գէորգ Պայյեանը, շահասէր, վատ, ցածահոգի, սև սիրտ մէկը, ինչպէս գրեթէ բոլոր հայ միւտիրները: Սա 12 տարի առաջ դարձեալ այսպիսի ոճրով մը միւտիր, էր 4-500 ոսկի կորզած է: Գիւղ գալուն պէս, բոլոր խամերը և, իր նման հայերը կը հաւաքէ գլխուն՝ ես Պօլիս լսեցիւ այս ոճրը կօմիտէն է գործեր, կըսէ, ուստի նախ աշխատինք զանոնք գտնել ու անոնց գլուխները ճզմել: Արդէն ոճրագործը իրենք են, կը յաջողի: Վերջապէս 8-10 իւլամ և 4-5 հայեր բոլորւելով, խնդիրը փափած աստիճանին կը հասցնեն: Անոնց, որը հայ ըլլալով հանդերձ, մատնութեան նախապատճառ եղած են, անունները մի առ մի պիտ գրեմ: Մ. Գէորգ այս մարդոց բերնէն կառավարութեան իմաց կուտայ, թէ 12 մարդ ևս բանտ գտնուղներուն չետ հաւաքէլով, սպանած են Էօմէրը՝ ընկերութիւնը լստեսելուն համար: Խնդիրը Երիզայի ընդհանուր դատախազի օգնականին հեռագրելով՝ Գուրուչա կուզեն: Յիշեալ օգնական դատախազն Գուրուչայ գալով և ամբողջ Յ օր Գէորգի հետ բանակցելէ վերջ զայն միւտիր կանւանէ վերստին և հետը գիւղը երթալով՝ կըկին քննութեան կը ձեռնարկէ: Յետ քննութեան, նոր զրաբարտեալ 12-ն ալ բանտարկելով՝ Գէորգի հետ կը խորհրդակցին խնդրոյն քայլական գոյն տալու մերենայութեանց վըայ և 24 մարդ, իւր Էօմէրի ոճրագործ, Երիզա կը փոխադրեն: Ընդհանուր դատախազի օգնականը Երիզա գնալէն վերջ, միւտիր Գէորգը իւր դաւերն կսկսի ի գործ դնել և իր թերագրութեամբ, իւր ոճրագործ բանտարկւած՝ Կէնձեան նշանը ամբաստանութիւններ կընէ Մ. Գալուստի համար՝ թէ յեղափոխականաց նախագահ, Արաբկերի ու Ակնոյ ընկերութեանց վարչապետ և իր տրամադրութեան տակ գտնուղ ընկերութեան ամեն պէտքերը հսկացող է: Այս ամբաստանութիւնը հիմն բռնելով՝ Արևանեանի տունը կը խուզարկեն: Արևանեան խոյս կուտայ: Երիզա հեռագրելով՝ թէ ընդհանուր դատախազի օգնական Բէմզին կուզեն և թէ Մ. Գալուստ Արևանեանը ձերբակալելու համար գումարտակ մի զուք: Զօրքերն զէմզին ալ կերթայ ժուրուցայ և կըսի այս անգամ ուղղակի կօմիթէ վնտուել: Գլահչեան նշանաւոր մատնիչը Բէմզին կուզեն և թէ Մ. Գալուստ Արևանեանը ձերբակալելու համար գումարտակ մի զուք: Զօրքերն զէմզին ալ կերթայ ժուրուցայ և կըսի այս անգամ ուղղակի կօմիթէ վնտուել: Գլահչեան նշանաւոր մատնիչը Բէմզին լուր կուտայ, թէ Եսիկեան նշանը ընկերութեան համար վառուղ ու կապար կը բերէ. Կանը քննութեան ենթարկւելով, բան մը չը չայտնելուն, զօրքերու վասնը կուղարկւի ծեծելու համար: Կանը երեսը ուուր (պէքմէզ) քսելով, ձեռքերն ու օփքերն կապելով, ամբողջ 2 օր կիզեւ արեւու տակ կայնեցնելով, քննութեան կը տանին, ուր, այս տանջանցների սարսափէն, կը յայսնէ թէ Դօրտոր Փաշայեան ե-

Քէնտի Գարահիսարէն 50 քաշ վառօդ և կապան զրկեց Մ. Գալուստին: Այս յայտնութեան վրայ 1 մէծիտ պարգև կը տրւի մատնիչ Ազարեայի իբր վարձատրութիւն: Աչա վատ մը, որ Յուղայի չափ ալ վարձք չկրցաւ առնել: Այս պարգևին վրայ Ազարիա ալ աւելի շահագրգութելով՝ շատ մը զապարտութիւններ ևս կընէ: Այս մատնութեան զոհերէն որն որ չի խոստովանիր իրեն վերագրածը, կը զօկի զօրաց վրանը, ուր ծեծը, խողամահակը (տօմուզ թօփի) կըսպասէ խեղճին. շատ անդամ ալ ըմբուտը վրանի ըլուրէն զաւիվայր կը գըլորեն: Աչա կառավարութեան օրինական քննութեան արարողութիւնը, որ իր ճշմարիտ գազանական նկարագիրը ցոյց կուտայ: Այս կարգի անլուր ճնշումներով ու տանջանքներով կը չարչարեն բանտարկեալները, որոցմէ Յ-ը՝ Մկրտիչ, Ղարամկրեան և Ղազար Կիրակոսեան կը մեռնին բանտին մէջ, քթերէն ու բերներէն արիւն հոսելով:

Ակմաներով անկողին կը մասն հետևեալները. Գէորգ Էլպէկեան, մէջ. Համբարձում Մանկիկեան, կարապետ Հայթայեան և ուրիշները:

Այս բարբարոսական արարողութենէ վերջ 12 անձ ևս ճերբակալելով և գիւղին ամբողջ զէնքերն ու վառօդը հաւաքելով՝ կը փոխադրեն Երիզա, իբր վնասա. կար և արդելեալ ցուցնելու համար: Յիշեալ 12-էն զատ շատեր քննութեան ենթարկած և տանջելով՝ պահանջանք ստակնին առած ու արձակած են:

Օգնական Բէմզին և միւտիր Գէորգը 2 գիւղի ունեռ դասակարգէն մարդիկ հաւաքած ու առաջարկած են 10 մարտինի հրացան գնել թութիւննի լազերէն և տեղ մը պահելով՝ պաշտօնապէս ցոյց տալ իբր ընկերութեան պահած զէնքեր, որուն Տ. Պօղոս Փոքր գիւղի և Տէր Յակոր՝ Մեծ գիւղի քահանաները չհաճելով՝ կը հերքեն: Այս եղելութեան առմիւ ամբաստանելք վկաներ ցցուցած են, բայց կառավարութիւն ուշագրաւ եղած չէ, իր սիրելի պաշտօներն մեքենայութիւնները երևան գալը չըստելով:

Զօր աց ժողովուրդին վրայ ըրած ճնշումը և հարիւրապետին հարստահարութիւնը:

Մէջ. Գալուստ Արխանեանը ճեռք բերելու պատրւակով՝ հարիւրապետը հրաման կուտայ զինուրներուն այգիները երթալ, աշխատող հարսներն ու աղջիկները նեղել, պատիւնին անարգել, ծառերը կտրել, խաղողի թուփերը վառել, տուները մտնել քննելու բայց կողպտելով դուրս ենել, բոնի կանանց հանդերձի սընդուները բանալ տալով՝ Մ. Գալուստը փնտուել: Զեր գործը այն պիտի ըլլայ, ըսելով, հալածել տնեցիները, մինչև որ ստիպւին 10-20 ոսկի տալով, դուրս հանել Միւտիր Գէորգը ժողովուրդին այս կրած զօկանքէն ու հալածելուն օգտակարութեամբ ամբողջ 100 ոսկի կառնէ 2 գիւղերէն, հարիւրապետին տալով, այս հարստահարութիւնները դադրեցնելու համար. միւս կողմէն տեղական կառավարութիւնն ալ գործելէ չի դադրիր, օրը 2-3 մարդ բանտ տանելով՝ Ա. Գալուստին հետ տեսներես, տեղը գիտեն, պատրւակելով, զօրաց վրանը

կը զօկէ ծեծելու համար, մինչև որ քանի մը ուկի կորզէ:

Ժողովուրդը ճարահատեալ Երիզա բողոքարկուներ կը զօկէ հարկ եղած տեղը բողոքելու համար. թաղական խորհրդոյ կնքով և 30-ի չափ ստորագրութեամբ, 680 ոսկւոյ առնւած կաշառքներու ցանկ մ'ալ շինելով՝ միւտիր Գէորգին, տեղական կառավարութեան, զօրաց և հարիւրապետին ըրած բարբարոսական ճնշումներն ալ կէտ առ կէտ բացատրելով:

Տրւած բողոքներն Երիզայի օգնական դատախազի նըկատողութեան կը յանձնւին, որ արդէն ինքն ալ խորհրդատու և առնւած կաշառքներուն կիսարար էր. բողոքարկուները կը բանտարկէ, սպառնալով, թէ մինչև որ այս բողոքները ջրելու համար աղերսագիր մը չտաք, բանտը պիտի մնաք:

Առաջնորդ Վարդան վարդապետը հրահանգեց մեզ թէ կառավարութեան բողոքեցէք. Ճեղչպիտի արձակիմ: Բնականաբար պահանջածը չկատարւիր և ճարպիկ պաշտօնեան սպառնալիքը կը գործադրէ. ովէ է փնտուողը, ովէ է հարցնողը խեղճ հայց վիճակը, քաշած անիրաւ զարկաները, տառապանքները. սովորմանի կառավարութիւնը... իր հայց նկատմամբ ունեցած բարեսրտութիւնը հանրածանօթ է: Էւմիլիներ ազատ համարձակ կը կթեն ու կը տանջեն արդարութիւն փնտուող խեղճ ժողովուրդը:

Այս միջոցին Ակնէն ու Արաբկերէն վաշտ մը հեծելազօքը կուգայ Մ. Գալուստ Արխանեանի ճերբարկալման օգնելու և ճանապարհին Մ. Գալուստի հետ կուի ըըւնեւելով՝ բաւական ժամանակ հրացանաձդութիւն կընեն և Մ. Գալուստ կը յաջողի փախչիլ. ասոր վրայ կատղելով՝ տանը վրայ կը յարձակին, եղած չեղած կը կողպտեն: Դարձեալ կուի կը բռնւին Գալուստի հետ, այս անդամ Արխանեանի լնկերներէն մին ձեռք կիյնայ, սակայն Արխանեան, 10 ժամ դիմագրելէ վերջ խոյս կուտայ: զինուրները վրէժնին լուծելու համար կրկին տան վրայ կը յարձակին, զի արդէն նպատակնին, գործերնին կողպտել է, այսպէս առիթներու կը սպասեն անյաղը թշնամին կրած պարտութեան ոխերնին ժողովրդէն հանելու համար և կողոպտուտի ձեռնարկելու զինուրներու երկու անդամ անէն ըրած կողոպտուը 1500 ոսկի կը հաշւի. ինչ հիանալի պաշար, որս անօթի գազաններուն: Երկու գիւղերու նիւթապէս վնասը մօտ 4000 ոսկի կը հասնի, թող բարոյական անչափ կորուստները. ժողովուրդը ամեն կողմէ ճարպահատ կը դիմէ՝ դարման սպասելով սեերես Աշդեգեանէ, որ կարելուրութիւն չի տար. բաղդին բերմամբ ձըմուը շուտ վրայ գալով՝ զինուրները ետ կը կանչւին. իսկ կառավարութիւն ու Մ. Գէորգ մինչև ցարդ կը շարունակին իրենց կեղեցումները: Այսօր Արմանի մէջ մէկը չկայ, որ 5-6 անդամ բանդարկւած ու կաշառ տւած ըլլայ:

— Բէմզին Երիզայի բանտարկելոց ըրած ճնշումը: Բէմզին ահարկու և բիրտ խստութեամբ Երիզա գըտնող բանտարկեալները կակի քննել. իր սպառնալիքներէն վախցող ու մատնութիւն ընողները միայն 3 են. կարապետ Գլձեան, թօփալ Վարդան, Գէորգ Մուրա-

տեան, որոնք պյար մեռած են: Քայի թօփալ վարդանէ, վերջի 12 բանտարկեալները երբ նրիզա կը բերւին, կառավարութեան իրենց վրայ ի գործ դրած զեղծմանց, ծեծերուն, տանջանաց դէմ բողոքելով, եղած քննութեանց ապօրէն ըլլալը կը յայտարարին:

Իէմզին՝ այս բանէն կատղելով, շատ հայհցանքներ, սպառնալիքներ կընէ՝ „տօքթ. Փաշայեանը ձեզ հրահանդեց, որ կառավարութեան դէմ բողոքէք“ ըսելով: Նոյն խիկ տօքթ. Փաշայեանի վրայ ալ խիստ ճնշումներ ու սպառնալիքներ բանեցուցած ու տօքթողին տւած յանդուկն, բայց օրինական պատասխաններէն այնչափ փըրփրած է, որ քննութեանց թղթերու տակ իր կողմէն նշանաւոր շէնք (բացատրութիւն) մը տւած է տօքթ. Փաշայեանի մասին՝ թէ ներեք տարիէն աւելի անընդհատ Արմաոյի ընկ, կազմակերպութեանը և զօրութեանը աշխատեր է” և ասկէ ալ չը դոհանալով, ոտքին ալ շըմթայ կը զարնէ:

Ա. Պօլսի մէջ ձերբակալւող և Գուրուչայ քըն-նւող Եղի ա Էլպէկե անի մատնութիւնը:

Կօմիտէին վերաբերող ամբողջ ամբաստանութիւնները պյա անձին տան մէջ կատարւած է. սա քննութեան մէջ ինքնիրեն կսկսի յերիւրել՝ յեղափոխական խնդիրներ, ուրիշներու ըսածներուն հաստատութիւնն տալ և այնչափ կը մեծցնէ իր զրպարտութիւնները, որ առասպելի կը մօտենան. իր ամբաստանութիւնները կը բերէ տօքտորին ու մէ. Գալուստին վրայ կը հիմնէ. պյա մատնութիւնները լոկ տունը երթալու և իւր գազանական հաճոյքը յագեցնելու համար է ըրած. աչա նշանաւոր վատ մը, որ վարկենական հաճոյքի մը համար խիզ կընէ 50 մարդու վրայ սոսկալի զրպարտութիւնք ընել և հաստատել:

Մ. Գալուստին ձերբակալումը.

Մ. Գալուստ ամբողջ տարի մը փախստական պտտելէ և քանի մը անգամ կուի մտնելէ վերջ, Զերմա անուն քարայրի մը մէջ կը պաշարի բազմաթիւ ոստիկան զինուորներէ և 400-ի չափ թիւրք խուժանէն: Յ օր անընդհատ կուելով և դիմադրելով, անօթի ծարաւ կը տոկայ իր վրայ տեղացող կապարներուն ու անհաւասար զօրութեան: Երրորդ ցերեկը ընկերներէն մին կիւնայ, մէկ ընկերն ալ թէնէն կը վերաւորւի, ուրիշ թշնամիները կօգտւին և քարայրի մէջ մնացածներն ալ ձեռք ձգելու կը ձեռնարկին: Տ. Յակոբ քահանան ու Մ. Գալուստի մայրը միջնորդ կը զգին Գալուստին զինաթափ ընելու համար. անմիշեր Գալուստ անօթութենէ պարտւած և ուժի չգոյութիւնէն կը բոնադատի անձնատուր ըլլալ: Իր ընկեր Խորէն ևս կը յանձնի և հասան չասան չաւուշի կողմէ կը սպանւի:

ԿՐՈՆԸ ԴԻՄԱԿ է

Առողջապահութեան միայն իւր երկրում գտնող մահմետականներին գրդական հայերի դէմ: Նոյն կրօնական դիմակի տակ նա դրդել

է և Անգլիայում բնակւող մահմետականներին, որոնք միտինգներ կազմելով բողոքել են անգլիական կառավարութեան ընթացքի դէմ ոյանուն մահմետականութեան: Պ. Մ. Զերազը էդինբուրգում արտասանած իր մի ճաւուկ պատասխանում է նրանց և պարզ յայտնելով, թէ հայկական շարժում ամենաին կրօնական բնաւորութիւն չունի, թէ հայերը չեն յարձակուում տաճիկների, քրդերի, չեղքեղների վրայ իրը մահմետականների, որոնք ոչ պակաս Ճնշւած են կառավարչական պաշտօնեաներից, բերում է ի միջի այլոց հետեւեալ հետաքրքիր փաստը.—

Մուստաֆա փաշան դաշնէ կապել իսմայիլ բէյի հետ թայի(“) ցեղը ընկերու համար: Նոքա մղել են նրա վըրայ կանոնաւոր զօրքեր, որոնք նրամանով քննաբարել են կանանց եւ կասորել տղամարդկանց: Մուստաֆա փաշան հրամայել է պատրաստել մի մեծ խարոյիկ եւ այրել Բերվարի քիւրդ ազնւական բագուկի հօրեղքոր որդուն ինքըն էլ չիրուխը բերանին կանգնած՝ գւարծացել է այս սոսկալի տեսարամնով: Այդ հրէցը պատժից պատասխանար համար ծծում է քիւրդ գիւղացիների արիւնը եւ իւրաքանչիւր տարի 6000 օսմանեան ուկի նրգնկայի տաճիկ պաշտօնեաններին է ուղարկում նրանց կաշառելու համար... Ինչպէս ամեն մի հայ, այնպէս էլ ամեն մի քիւրդ գդումէ, որ իր կեանքը վտանգի մէջ է եւ իր ապահովութիւնը որում է պանդիստութեան մէջ: Բազմաթիւ քիւրդ գիւղերում կարելի է պատահել կիսամերկ, քաղցեց մնանող, կըմակը դարձած կանանց եւ նրեխայոց որոնց խկական տեղ եթէ ոչ հանգստարանը՝ հիւմանդանոցը պէտք է լինի”:

## ԱՐՁՔ ՕՐՀԱՍԱԿԱՆՔ ՀՅՈՒԱԳՈՅՆՍ ԿԻՒԻՒՆ

«Հնչակը» մեր պահանջի ճնշման տակ վերջապէս բարեհածեց ի կատար ածել մեր մասին (իր ուրիշ բաներ յայտնելը, այլ եւս ուրիշ կերպ վարւելը), առաջ բերելով այն «Փաստը», որի հիման վրայ որոտարով սպանալիքներ էր կարդում մեղ եւ մեղագրում («գրական գողութեան») մէջ: Ահա «Հնչակը» «Փաստը»(“), որը նոյնութեամբ առաջ ենք բերում:

«Պէտք է լաւ գիտնալ, որ առանց իմ թոյլտուութեան երկու անգամ (միայն երկու անգամ. չէ՞ որ ա. Խմբագրապետը ասում է Մուշի և Սասունի „մե քանի՛ թղթակցութիւնները“ դրկած տաղեկութիւննիս արտադրելով դրկած են այդ («Երոշակի») եւ այլ խմբագրութեանց... (”) Պրեցի, որ նթէ այդպէս լինի այլ եւս ոչ մէկուն չը պիտի տեղեկութիւններ («հաղորդեմ»), (ուրեմն նշական Մուրատը տեղեկութիւններ էր հաղորդում դաշնակցականներին: Ինչո՞ւ, Ե՞նչ կապ կար. պ. Հրապանականը (” ) այդ մանին համեստութեամբ լրութիւն է պահանում) այլ ուղղակի խմբագրութիւն («Հնչակը»), պիտի ուղղակի, (ինչո՞ւ նենց սկզբեց չէ ուղարկում կամ թէ չէ „զուրութիւնը“ տեղիունելու համար անհոգութելը) ուր տպեկելն վերջ ամենքը կը կարգան: Աւելի որոշ կարելի է, ասել այսպէս որ ես բերանացի իւրա առունք տած եմ (պ. Խմբագրապետն ասում է վերցնել են իրը) ՄԽԱՑՆ ԿԱՐԴԱԼՈՒԹԻՒՆ և Հնչակը խմբագրութիւնը զըրկելու, խոկ անո՞նք... Ես այդ անպատճենութիւնները արդէն գուշակելով զրած էի...»

Ահա «Հնչակը» «Փաստը, դոկումէնտը»), որ, ինչպէս ինքն է ասում, քաղում է Մուրատի ամենավելիքին նամակների մէկից: Թող ներւի մեզ, որ մենք այդ նամակը չերք կարող ընդունել արագատ, խկական, նա այն աստիճան անհեթեթ, կարկտած եւ հակասական է: Այդ նամակ հնա-

բոլը այնքան խղճուկ խելքի տէր է, թէեւ Խմբագրապետ - Հրապարակախոս (փհշտ), որ աչք ծակրդ կեղծիքը անսպամ չի նկատում. Խե՞ղճ Խմբ. - Հրապարակ, գոնէ զգուշացէք, որ ձեր սեփական կոտրած ողորմելի գրիշը ձեր աչքը չհանէ, ի՞նչպէս, դուք առում էք, որ զանակցականները իրենց (յատուկ յատկութեամբ) հնչակեանն ներկայանալով (‘‘<sup>ս</sup>’’). խարել են ձեր թղթակիցներին, իսկ մի քանի տող ցած ձեր առաջ բերած խօսքերից երեւում է, որ թղթակցութիւնները հաղորդում էին ոչ (‘‘Հնչակեանն ձեւացող’’) զանակցականներին, (միայն կարգալու համար). ուրեմն ստում էի՞ք, որ դաշնակցականները հնչակեան էին ձեւանում. այսպիսի ստահոտ, ինքնահաւան տղայամութիւն միայն կարելի է սպասել (‘‘Հնչ.’’) Խմբագրապետ հրապարակախոսից:

Ենթագրենք նոյն իսկ, մի ըստէ, որ Մուրաստին վերագրը բած խօսքերը ճիշտ են: (Ընթելցողը կը տեսնէ մի քիչ յետոյ, որ մենք աւելի քան իրաւունք ունենք կատկածելու առաջմամբ մենք գործ ունինք միայն «Հնչ.» («Նշանաւոր») «փաստացի պատասխանի» հետո:—) Ի՞նչ մտերմական սիրավելիք յարաքերութիւն հնչակեան թղթակիցների կողմից, չէ՞ ցանկանաւ, որ միայն «Հնչ.» յատկացրած թղթակցութիւնները նախ Դաշնակցական կուսակցութեան անդամները կարգան: Բայց այսու ամենայնիւ մեզ համար հանելուկ է մնում այն, (մանաւանդ ի նկատի ունենալով «Հնչ. կենտրոնի») արձակած չըշաբերականները, հրամանները, անսամբէմները... Ամենիվկայի իւր հետեւողներին), թէ ի՞նչպէս հնչակեան կոստակցութեան Մեծ Կենտրոնը, որ ամենառորմածարար մեզ իւր թշնամիների ցուցակն է անցկացրել, իւր հայրական ուսերի վրայ մի ամբողջ տարուց աւել տարել է («Հնչակեան եղբայրների»), իւր թղթակիցների այդ տեսակ ըմբռուտ, («Անդրացիպիլին») ընթացքը: Իսկ թէ Մուրաստը իւր յօժար կամքով հայրդուում էր իւր թղթակցութիւնները դաշնակցականներին (միայն կարգալու համար), չէ՞ որ այդ աստիճան մտերմութիւնը ցոյց է տալիս սերտ յարաքերութիւններ, որ անշուշտ միայն հասալակ կօմպլիմենտներում չէն կայանում, այլ համերաշխ գործունէութեան, փոխադարձ աջակցութեան: մէջ, ինչը՝ («Հնչակը»), որ սորանից մի քիչ առաջ յայտարարում էր, թէ հնչակեանները ոչ մի յարաքերութիւնն չունին դաշնակցականների հետ, չի բայցարում, թէ ինչումն էն կայանում այդ յարաքերութիւնները և ի հնչպէս պատահեց, որ իւր թղթակցութիւնները կանոնաւու որ նախ դրում էն վիսկանութեանը կարգալու համար... Անբացարելի գաղտնիք է դա («Հնչ.» հոգեհիւանդ Խմբագրապետի համար, որ իրեն մի կենտրոն է երեւակայում, որի չորջը պատում է հայկական շարժումը, բայց չառ բնական է բուն գործիչների համար, որոնք ընթանում են կուի դաշտում ձեռք ձեռքի տւած, մի կողմ թողնելով կուսակցականութիւնը գործնական ասպարէցում:

Անձնական ինչ ինչ միտումներով կուրացած Խմբագրապետական շահը՝ Հրապարակախօս արք, առաջ բերելով (Փրկ փաստը)՝ Մուրատին վերագրած խօսքերը, գիտամամբ մոռանում է մի բան, այն է որ Մուրատը (Ալար) ստորագրութեամբ աւելի պակաս թղթակցութիւն է գրել, քան Մուրատի մոռարիմ ընկեր եւ գործակից (Դժոխվքը): Երբ Մուրատը արդէն դահճի ձեռքին է եւ մատնած լուսթեան, գույց յաւիտեական, Խմբագրապետի համար զժւար չէ ամեն իւր ռազմական նրան վերագրել, նրա անունից ձևով խափական խորաման կութեամբ թքով խօսքեր կապել, որպէս զի կարողանայ ուրիշների աշքում թող փչել բայց ինչո՞ւ հասարակաց գատին չկանչել (Դժոխվքին), որ վկայ է .. Հնչակին՝ եղիշափ յատկութեամբ այդ չի կարող անել, որովհետեւ (Դժոխվքը) կենդանի է ու ազատ եւ ամեն ստախօս-բամբասողի բերանը իսկոյն կը փակէ: Բայց մենք ստիգմած ենք այդ անել, որպէսզի այն ցեխը, որ Խմբ. Հրապարակախօսը ուղում էր գաշնակցականներին երեսովը տալ, գնայ իր բերանը զեխէ:

Ահա թէ ինչ է զբում „Դժոխվքը“ մեր ընկերներից մէկին  
թղթակցութիւնների հարցին վերաբերեալ: \*)

“Մեք իբր ժողովրդի զաւակ, և ծանօթ նրա բնա-  
„լորովթեան, հոգւոյ տրամադրութեան, և վերջն չորս  
ոտարիների ընթացքում եղած գործունէութեան, կա-  
„տարելապէս համոզուեցանք և հարիւրաւոր ապացոյց-  
„ներով տեսանք որ կուսակցութիւններն եղան ժողով-  
ոդի հիմը քանդող, քան օգուտ մը տուող։ Արդեօք  
„ամօթ չէ՞ր հայ Աեղափսական գործիշներուն, որ հա-  
„կառակ Մշոյ և Սասնոյ վերջն չորս տարուայ նօմի՝  
„անզէն լինելու գոռուամին ու գոյզուամին, իրենց ականչ-  
„ները փակեցին, թէև վերջնականապէս Հայի վիճակն  
ոյցպէս (արիւնով) պիտի լինէր, բայց գէթ պիտի կո-  
„տորուէր, կոտորելով, պիտի սպանուէր սպանելով, և  
„փոխանակ յամօթ և ՚ի նախատինս Հայութեան, Հա-  
„յաստանի պարծանք եղող Սասուն մը և Տարոն մը  
„սովորէն և զէն ու ռազմամթերք չունենալէն, մի ամիս  
„հազիւ գիմանալով կորսուելէն ու փլատակաց տակ  
„ծածկուելէն, գէթ պիտի գիմանար մի քանի ամիսներ  
„աւելի, և Յեղափոխութիւնը այդ տեղողութեամբ լին-  
„դարձակ ծաւալ ստանալով՝ բոլորովին չը պիտի քան-  
„դուէր, ողջ ողջ հորերու մէջ չը պիտի թաղուէր այդ  
„բիւրաւոր անմեղ մանկունքն ու կոյս աղջկունքը։ Ժո-  
„ղովզդի այդ անտանելի կացութիւնն աչքի առաջ ու-  
„նենալով էր, որ մեր Սիրելի և Սրտակից Մուրասը  
„գրեթէ արտասուալից աչօք միշտ կը գըրէր և կա-  
„ղաչէր Հայ գործիշների օգնութիւնն ու ձեռնտուու-  
„թիւնն. վերջապէս այդ կուսակցութիւններն այնպիսի  
„վէրը մը բացած են մեր սրտին՝ որ ց’մահ անմօռա-  
„նալի է մեզ։ Ներկայ հանգամանքներում ինչպիսինը  
„մէնք՝ Հայերս ենք գտնուում, անխղջութիւն և մինչ  
„անդամ դաւաճանութիւն չէ արդեօք, որ դեռ այդ  
„կուսակցութիւններն բաժան կը գործին. այդ ընթաց-  
„քը անշուշտ մեզ դիտել կ’ուտայ, որ ես ական փառ-  
„քի յետելից ընկած, անձնական կրքերից կ’ուրացած  
„ջլատում են ոյժերը քան զօրացնում, եցացած են  
„ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանութեան  
„համար են ծառայեցնում գործը Ի՞նչ է ներկայաց-  
„նում մեր բոլոր ոյժը՝ այն մեծ ոյժի առաջ, որի գէմ

<sup>4)</sup> Զայած, որ մենք չենք բաժանում՝ “Դիտութիւն” կարծիքը կուսացութիւնների վերաբերմանը, այնուամենայնիւ առաջ մենք պերում այդ կտորը ամբողջութեամբ, պահպանելով նրա ուղղագրութիւնը՝ բայց առ բայց, կէտ առ կէտ:

Յայտնի պատճառներց դրված, այս նաև կարուք այս կարուք, որ վերաբերում է Թղթակցութեանների իմացին, Տեղենաւի ծնուազի փոխութայով տալ չենք կարուք. Միայն նրա եւ սուրբագրութեան լուսանկացը ուղարկում նոր ապահովացած նաև կով ՝ Հնչակի և Խմբառութեան:

„Կոռուկը ենք, մի կաթիլ ջուր՝ աշակին գետի մէջ,  
ու գեռ կ'գտնուին այնպիսի անբարոյականներ որ ան-  
նեղձաբար այդ կամիլին էլ կուզեն ջլատիլ. կուսակ-  
ոցական կըքերով իրարու գէմ մղել, փոխանակ միա-  
ցած ընդհանուր թշնամուն դիմադրելու...”

„Մեք Համոզուած եմք որ դա է մեր տան քանդողը .  
„դա է մեր աչքի գերանն, քանի որ Հայստանում  
„արիւն կը հոսի, և մօտ ու ազգակից մարդկանց. և գեռ  
„իրենք հեռի այդ ժողովրդի թշուառութիւններից ու  
„անտանելի տանջանքներից, իրարու գլուխ կը կրծին,  
„ուրեմն մեզ ժողովրդից կը մայ՝ դրան ջնջել և կամ  
„ժողովրդի ներկայ վիճակի և իղծերի համաձայն ժո-  
„ղովուրդ դարձնել: Ահա կը լրանայ, չորս տարին որ  
„Պ. Միջրան Տամատեանի և Համբարձում Պյաճեանի  
„(Մուրատի) հետ գիտակից եղած եմ ժողովրդի պա-  
„հանջներին. ցաւերին ու տանջանքներին, և մեր կա-  
„շի վրայ զգացած եմք այն բոլոր թշուառութիւնքն  
„որով ժողովուրդը իւր օրհասական ժամուն հասած  
„էր: Դ նկատի ունենալով ժողովրդի անհրաժեշտ պա-  
„հանջներն, նոյն իսկ այդ գործիչներն զգուանք յայտ-  
„նելով այդ կուսակցական բաժանումներէ, կը ջանային  
„և մինչ անդամ իրենց կեանքեր ևս զոհ տուին ժո-  
„ղովրդի շահերի համեմատ: Թունդ կուսակցական մը  
ոտեսնելով՝ և իւր կաշի վրայ զգալո՞ւ այդ թշուառ  
„ժողովրդի, թշուառ դրամթիւնը անմիջապէս կուսակ-  
„ցական հոգի է կը հեռանար, և իւր մտածմանց ա-  
„ռաջին կէտն կը դառնար, ժողովուրդը և նորա շա-  
„հեր: Ժողովրդի շահերն ուր կը պահանջէն  
ոդիմել՝ անդ կը դիմէին. և ուղղակի այդ նը-  
„պատակաւ էր որ Պ. Մուրատը շտապեց ՚ի  
„Կովկաս անցնել, ժողովրդի անհրաժեշտ պա-  
„հանջներին գոհացում մը տալու համար. այդ  
„նպատակաւ էր որ իւր յօդուածները ու  
ու եղեկագրերը կը դէկտ կը դէկտ կը դէկտ կը դէկտ  
ու մէք թերոււն, ժողովրդի ցաւերը ու տանջանք-  
ները նամանաւանդ նոցա թշուառ աղաղակ-  
ները շատ թուով մարդկանց ականջին հա-  
նի, նոքա ուղղակի նորուած էին գործին և  
ո՞չ այս կամ այն կուսակցութեան . . .

ովերջապէս մինչ ցարդ և այսուհետեւ ևս, իբր  
ոժողովրդի զաւակ, մեք նուիրուած եմք Գոբ-  
ոծին և Ազգային շահերին, ինչպէս իմ Սիրելի  
ոգործակից և աշխատակից Մուրատը իւր ՍԱԼ  
սատորագրութեամբ յօդուածները նոյն-  
պէս իմ ԴՓՈԽ և ԳԱԶՊԻՆ ստորագրու-  
թեամբ յօդուածները մեր յօժար կա-  
մոք երկութերթերում ևս տպուած են

„**Ժ**ողովքի աղեխարշ վեճակը և Մայր Հա-  
յաստանի մէջ եղած արտասովոր անցքերը  
աշխարհի առաջ մերկապարանոց ընելու հա-  
մար։ Մեր այդ անմօռանալի ընկերը պ. Մուրատը և  
ես ինքս միշտ ջանացած եմք և կը ջանամք որքան կա-  
րելի է միութիւն գոյացնելը, քանզի գործի յաջողու-  
թեանը համար անհրաժեշտ է միութիւնն։ Մուրատը  
գլուխ տրաքեցնելու չափ կը ցանկար և կը ջանար նը-  
պաստել միացման գործին։ Աերջապէս մեր ամեն մի  
քայլը յօդուտ ժողովրդին նուիրուած է և պիտի նու-  
իրուի։ Մեր մեղանչած կը լինէինք ձշմարտութեան դէմ,  
եթէ գորա ժողովրդի այս նեղ և օրհասական բոպե-  
ին զբաղւած չը լինէին, անձնական մանրակրկիտ հա-  
շիւներով իրենց նահատակների քանակութեամբ պար-  
ծենալով, մինչդեռ այն կողմ երբ ժողովրդի մաքուր  
արիւնը հեղեղի նման սկսեց հոսել, քարերն էլ գա-  
լարեցան, և Եւրոպական Մամուլը ձայն բարձրացրեց։  
Եւ այդ բոլորը ոչ թէ Հի կամ Դի տեղեկագրե-  
նով եղաւ, այլ ժողովրդի արեան գնով . . . Մեր իս-  
կական ոյժը ներկայացնողը ժողովրդն և այն անհատ-  
ներն են որոնք նետուել են և նետուելու են կրակի բո-  
ցի մէջ, այն որ ժողովրդի ներկայ կացութեան և ա-  
պագայ երջանկութեան համաձայն չէ և համակիր, այն  
ոէ ժողովրդի շահուց թշնամին, ժողովրդը ոչ մի ժա-  
մանակ չէ կարող նրանց հետ հաշտուիլ։ Ժողովրդն  
ոէ առաջող, և ինքը ժողովուրդը պիտի լինի, իրեն  
ղեկավար, վերջապէս ժողովուրդն արթունէ և այդ բո-  
լորը անմօռանալի կերպով կը տեսնէ».

Ահա՝ թէ որն է փաստը, «Հնչակից պ. Խմբազրապետ Հրապարակախօս» երեւում է, որ դուք ձեր անկուսը հաշխատենալ էք, որովհետեւ մեղ տեղ էք արդէն ձեր հրաժեշտ արք. սա փախչել է... ձեռնոցը դուք էք ճգել, դուք էք մեղ կուի հրախիրել ձեր անսամօթ վարպետն ըովէ «ազգիս ներկայ ծանր վիճակում», դուք էք «քաջութեամբ» ընդունել մեր «վախով նետած ձեռնոցը» եւ դո՞ւք էք տալիս «մոռ ք բարեւ»։ ո՞ւր էք փախչառ եւ մոնում ազգի փեշի տակի Ս՛լի, դուք խաբերանե՛ր, կեղծաւոր փարսխեցինե՛ր. երբ պարզ տեսնում էք ձեր բարոյական անկուսը, ա՛յն ժամանակ էք սկսում «ազգիս ներկայ ծանր վիճակից» վրայ մտածել. ազգի ծանր վիճակից վրայ խորհունե՛ր, ինչո՞ւ հենց այս ծանր րոպէում բարձրացրիք. այդ հնարած խնդիրը, որ պատի խնդիր է. եւ լուել չի կարելի, ու այն էլ որոտալով, սպառնալիքներ տալով. ինչո՞ւ ա՛յն ժամանակ չըռղոթեցիք, երբ լոյս էին տեսնում նոյն յօդւածները, եթէ դուք մաքուր էքք. Բայց երբ Սասունի կոտորածը եղաւ եւ առաջին անգամ («Դրօշակը») հրատարակեց թղթակցութիւն, իսկ երեւակայութեամբ հայկական յեղափոխութիւնը մենավաճառ արած Հնչ. ո՛չ, որ մի խիստ հարւած, մի անկում էր ձեզ համար, եւ հայ ժողովրդին նորից խաբելու՝ թէ ամեն տեղ դուք էք, թէ ձեզնից դուրս («չիք փրկութիւն»), ահա հնարեցիք վար մեղադրանքը. Բաւական է այս քանն էլ... Սահպաւծ լինելով մեր պատիւը պաշտպանել ձեր կասկածելի գրական բարոյականութեան դէմ, մենք կը շտապենք թողնել գրիքը, երբ բուն խնդիրը պարզեցւոց յատոյ, մտենում ենք

ձեր ձեզ վայելուչ հայոցանքներին Հետեւել ձեզ, ձեր կեղտուս գրական զբօսանքներում, հետեւել ձեր փորոցային, սրիկային վայել հայոցանքներին, «յարտնի աւեսակի մարդկանց» բերանից դուրս պղծած խօսքերին, որոնց ազատ կարող էք գործ ածել ձեր ինտիմ շրջանում, մենք ոչ ցանկութիւն ունինք, ոչ ժամանակ...

Դաշնակցութիւնը իւր օրգանով ուրիշ գործ եւ պարսականութիւնը ունի կատարելու, նա ծառայում է յեղափոխական դատին, մինչդեռ «Հնչակը» ամեն ճիզ է թափում յեղափոխական շարժումը իրեն, իր կիւանդուտ փառամդութեան ծառայ եցնել եւ այդ նպաստակին համելու համար նա ուղարկում է ուղարկում, որպէսզի ամբողջ հայկական շարժումը իւր մէջ պարունակի: Բայց զգուշացէք, պ. Խմբ. Հրապարակախօս, որ առակի գործի պէս, ձեր խղճուկ մարմինը հնայիթի եւ աճող յեղափոխական նեղեղը ճնող իր ափը չնետի, որպէս վասակար, պարագիտ մի գիտէ... նոյնիներն արդէն երեւում են: Շարունակեցէք քնոյնը այժմեան ոգով, ձեր միմոսական անանուն թերթի միջոցով եւս, որով ինքներդ էք ապտակ ուտում, նոյն իսկ ովկեանոսի ձեր սիրեցեալ միւս ափերից...

Եաքեցէք ձեր կեղու...

\* \*

«Դրօշակի» այս տարւայ առաջին համարի առաջնորդող հանգիստ չէ տալիս («Փաստեր կերծող») «Հնչակին»: Իրեւ պատասխան սոյն առաջնորդողի, Հնչ., հետեւելով մեզ, իր երկրորդ համարում տպագրեց նոյնանման մի առաջնորդող, այն տարբերութեամբ, որ յեղափոխական բոլոր գորերին Հնչակի աւագանում մլրատեց՝ նրանց ճակատին գրոշմելով «Հնչ. արինագոյն կնիքը», մինչեւ իսկ վարժապետ Մարդարին, որի մասին նա միայն տեղեկութիւն ստացաւ Դրօշակից: սա պատիւ է բերում Հնչ., որովհետեւ ինքն իրեն հաւատարիմ է մնում կեծել, ստել, խաբել... Դրանով չբաւականացաւ. իւր հաւատարիմ ընկեր անանուն թերթում էլ լուտանքներ թափեց, եւ վերջապէս նոյն յօդւածի առթիւ տպագրել է չորս սիրնեակ Դրօշակին նսիրած ամբողջ յաւելւածում այս անգամ էլ ուրիշ վարագոյրի տակ՝ իր թէ պատմական փաստեր է շտկում. խեղճ մարդ:

Մենք դարձեալ կրկնում ենք՝ Յակոբը ոչ մի կուսակցութեան պատկանելիս չէ եղել. Հնչակը սուտ է խօսում, Յակոբը իրեն հնչակիւն երթէք չի անւանել, դրա հերքումը մենք հրապարակեցինք ամօթ համարելով զբաղեցնել եւ զբաղեցնել հասարակութիւնը: Ոչ մի կասկած չկայ, որ Աշրդեանի անկումը անմիջական հետեւանք է Յակոբի փորձի, որովհետեւ ենց այն օրւանից Աշրդեանը քաշեց իւր սեփական տունը եւ չեզ մասնակցում ոչ մի գործի, հնայած որ աշխատում էին նրան համոզել, որ առ այժմ գոյնէ պատրիարքական թղթերին ստորագրէ: Սա փաստ է, որ, ի զարմանս մեր, հակառակ իւր սովորութեան, խոստովանում է ինքը Հնչ. էլ ասելով՝ վերջինս (Աշրդեանը) շտապեց փակել իր Մաքրիքօյի բանում. բայց շարունակում է յատուկ իր ձեւով՝ «աւելի ամրացնելու նրան (Աշրդեանին) իր պաշտօնում, ...մէկ ընդարձակ միջանցք բաժանում է Յակոբի դորի օրն Աշրդեանի անկման օրից» եւ այն էն, ինչ պէտք է ասել նրան, որ միշտ ստում, խեղաթիւրում է փաստերը. ահա ճնող էլի ապացոյց՝ Պօլսի հայկական գործի դնելը դնում է միայն Սիմօն պէտի ձեռքին եւ միայն այն պատճառով, որ հնչակեանները նրան վիրաւորել են. այդ վերքից էլ նա մեռաւ: Ոչ միայն ամեն մի պօլսեցի, այլ եւ Պօլսի կեանքին քիչ ծանօթ մարդն անզամ գիտէ, որ Սիմօն պէտի նմանները տասնեակներ են, որ դա մի կազմակերպած ընկերութիւն է, որ կարող է Սիմօն պէտի պէտներից մի քանիսը ընկեր, բայց պատրիարքը նալի իր տեղը: Բայց Հնչակին հարկաւոր է իրեն վերագրել, իրեն սեփականացնել յեղափոխական ամեն երեւոյթ, գործ եւ այն աս-

տիճանի վարակւել է այդ հիւանդութիւնով, որ հասցրել է մինչեւ մերութեան:

Մի բան, որ աններենի կերպով չի իշւած մեր յիշեալ առաջնորդողում, այդ Վանի կախաղանն է. բայց Հնչակը այդ մեզ չէ յիշեցնում, որովհետեւ կախաղան բարձացող հերոսը հնչակեան չէ եղել: Եւ դեռ Հնչ. յանդգնութիւն ունի պատմութեան էջեր սրբագրելու...

\* \*

Հնչակը նոյն յաւելածում պատասխանում է եւ իր վերաբերմամբ մեր արած քննութեան: Այդ մասին առ այժմ մենք կասենք, որ նա մեր ձեռքը տալիս է էլի մի նոր փաստ ասելու եւ կրկնելու: Հնչ. զուրկի է ինքնուրանութիւնից, նրա Խմբ. պատարակախօս, որպէս յեղափոխական շեղեղը ճնող իր ափը չնետի, որ նա չի հասկանում ոչ Շարքսին եւ ոչ էլ ասցանիլիքնը, որ նա եղել է եւ է իւր տեսական յօդածնեւրում գրական պարագիտ: Սպացոյների բաղմաթիւ. թէ ծրագիրը, թէ առաջնորդողների մեծ մասը, զրոյկների յառաջաբանները, մի խօսքով, տեսական գրածքները կամ բառացի թարգմանութիւննեն, կամ կոյր նմանողութիւնն, որ Հնչ. ծախել է հայ հասարակութեան (իւր սեփական փիրմայի տակ) եւ անամօթաբար իւր գրչին է սեփականացրել իրեւ ապացոյց մեր ասածների մենք առաջ կը բերենք առ այժմ միայն երկու փաստ.—Ծննդեան օրից իրեն ացեալ գէմօկրաստ համարող Հնչ. ծրագիրը («Նարօդնայա Վոլիա»)-ինն է բառայի թարգմանութեամբ: Լասալի («Մանութեան մասին») գրքոյկին կցորդած յառաջաբանը ինպէլիք (Դիտական սօցիալիզմի) թարգմանութիւնն է մի քանի կրծառումներով, եւ ահա թէ ինչու է նա («Էնգլիստեան ոճ»): Այժմ հետաքրքր է իմանալ թէ ով է եղել «Հատ բան հասկացողի վիճակում»:

Հենց այս երկու փաստից էլ կարելի է շատ որոշ կերպով եղբակացնել, թէ Հնչ. ինչ տեսակ թերթ է եւ նրա Խմբ. Հրապարակախօսը ի՞նչ (գրական տիպ):

ՆԻՒՐԱՑԻՌԻՌԻՌԻՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

«Դրօշմ»-ից 100 բուբի, «Լարիջան»-ից 127 բուբի, Գանձ-ից 100 ր., «Անկելանոց»-ից 35 ր., «Ճառագայթ»-ից 100 ր., «Ծիածան»-ից 50 ր., Հայկաշէնի Վրէժ խմբից 10 ր., Սառնաշէնցի Ա. Ս-ձէից 20 ր., Սառնաշէնցի Ս. Ս-ձէից 20 ր., Սառնաշէնից 14 ր., Նոր Քաղաքից 36 ր., Ս. Պ-ից 3 ր.

Քարու քաղաքի 1894 թ-ի մուտքը.—

Հանդանակութիւն 195 ր. 86 կ., Սլաք ընդհանրապէս 70 ր. 85 կ., Հաւաքածու 110 ր. 25 կ., Պարագանեաց 21 ր. 70 կ., Թրվէժ 62 ր. 20 կ.

Ահշապ քաղ. կետը. սնդուկի մէջ ստացւեցան. Մատթէսութեան խմբ. 150 դահ., Վարդանեան խմբ. 55 դահէկ., Վանօի խմբ. 343 դհ. 20 փր., Կամաւորներ խմբ. 273 դհ., Ի սէր ազգի 140 դհ., Սահակ խմբ. 100 դհ., Վրէժ 20 դհ., Ցովնան խմբ. 360 դհ.—Դուէնք քառօդ 95 դհ. ևս 100 դհ.

Վասպուրականի նշտունեաց խմբ. 1000 դահէկ:

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թըլթակցութեան և նուեիրատութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազւատ տպարան: